

## **«Ֆինանսներ» առկա և հեռակա բակալավրիատի կրթական ծրագիր**

### ***Ընդհանուր տեղեկություն***

Ֆինանսների ոլորտը լայն է և ընդգրկուն, այն ներառում է հանրային և կորպորատիվ ֆինանսները, ֆինանսական շուկաներն ու ինստիտուտները, իրենց ենթակառույցներով, մասնակիցներով, կառուցակարգերով և գործիքներով:

Ֆինանսական շուկան իր զարգացման առումով բավականին ակտիվ է, և համակարգի արդյունավետ գործողության համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև զարգացման արդի միտումները, պահանջները, միջազգային չափորոշիչները: Հետևաբար, «Ֆինանսներ» կրթական ծրագիրը բավարարում է ֆինանսական ոլորտի բոլոր մակարդակներին՝ ընդգրկելով ֆինանսական համակարգի բոլոր օղակները, ինստիտուտները և շուկաները:

Ուսումնառության ավարտին ուսանողը կուտակում է 240 կրեդիտ, որի արդյունքում նրան կշնորհվի տնտեսագիտության բակալավրի որակավորում:

### ***Մասնագիտության նկարագիրը***

«Ֆինանսներ» մասնագիտության բակալավրիատի կրթական ծրագրի նպատակն է պատրաստել ժամանակակից, խորը գիտելիքներով ու գործնական հմտություններով օժտված բարձրակարգ մասնագետներ, ովքեր իրենց մասնագիտական կարողություններով կհամապատասխանեն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային աշխատաշուկայի կողմից ներկայացվող պահանջներին և չափորոշիչներին: Այն նպատակաուղղված է պատրաստելու, կրթելու և դաստիարակելու որակյալ մասնագետներ՝

ա/ հանրային և կորպորատիվ (կազմակերպությունների) ֆինանսների կառավարման և հատկապես կազմակերպման, պլանավորման, վերլուծության և գնահատման ոլորտներում,

բ/ ֆինանսական շուկաների և ֆինանսական ծառայությունների մատուցման արդյունավետ կազմակերպման, կարգավորման և վերլուծության բնագավառում,

գ/ ֆինանսական հիմնական և ածանցյալ գործիքների թողարկման, տեղաբաշխման, բորսայական և արտաբորսայական շրջանառության կազմակերպման, դրանց վերլուծության, հաշվառման և գնահատման ոլորտում,

դ/ ֆինանսական ինստիտուտների՝ առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերի գործունեության կազմակերպման, դրանց ֆինանսական հոսքերի և ակտիվների արդյունավետ կառավարման ոլորտում:

Առաջադրված նպատակների կենսագործմանը հասնելու համար «Ֆինանսներ» բակալավրիատի կրթական ծրագիրը նախատեսվում է հետևյալ խնդիրները.

- ձևավորել ֆինանսական մտածողության մշակույթ, արմատավորել տեսությունները սովորելու, գործնականում կիրառելու և ուրիշներին մայրենի և օտար լեզուներով սովորեցնելու, քննադատական, ստեղծագործ մտածելու, վերլուծելու և խնդիրներ լուծելու, գաղափարները արդյունավետ փոխանցելու ունակություններ,
- դաստիարակել թիմային աշխատանքի և բազմամասնագիտական (միջառարկայական) թիմում աշխատելու, բանակցային հմտությունների և մասնագիտական էթիկայի սկզբունքներով առաջնորդվելու, կառավարման, առաջնորդման և կոնֆլիկտների լուծման հատկանիշներ,
- ձևավորել և զարգացնել հարկերի, տուրքերի հաշվարկման և վերլուծության, հարկային քաղաքականության և հարկային վարչարարության ըմբռնման և գնահատման ունակություններ,
- արմատավորել և զարգացնել կազմակերպությունների (կորպորացիաների) ֆինանսները, գոյացման աղբյուրները, դրանց կառավարման սկզբունքները, մեթոդները և գործիքակազմը իմանալու, եկամուտների և ծախսերի, շահույթի, ֆինանսական հոսքերը կառավարելու և բյուջեները մշակելու հմտություններ,
- սովորեցնել հասկանալ և ապահովել կազմակերպությունների ֆինանսական կայունությունը, վճարունակությունը, լուծարելիությունը, ինչպես նաև կազմակերպությունների հաշվապահական հաշվառման, ամորտիզացիոն, հարկային պլանավորման քաղաքականությունը, կենսագործել դրանք,
- ձևավորել ֆինանսական ինստիտուտների գործունեությունը, տեսակները, դրանց ֆինանսները հասկանալու, ֆինանսական հաշվետվությունները կազմելու և ներկայացնելու ունակություններ և կարողություններ,
- ապահովել բանկային գործունեությունը, դրա կազմակերպման մեթոդներն ու գործիքակազմը հասկանալու և կարգավորող օրենսդրությունը ըմբռնելու ունակությունների ձևավորումը,
- արմատավորել և զարգացնել առևտրային բանկերի ֆինանսական և ներդրումային գործունեությունը ըմբռնելու, դրանց կառավարման մեթոդներն ու գործիքակազմը իմանալու կարողություններ և հմտություններ,
- ապահովել ապահովագրական գործունեությունը, տեսակները և ռիսկերը հասկանալու, ապահովագրական ընկերությունների ֆինանսական և ներդրումային գործունեությունը ըմբռնելու ունակություններ,

- սովորեցնել ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերի գործունեությունը հասկանալու, դրանց ակտիվների կառավարման մեթոդներն ու գործիքակազմը իմանալու և կիրառելու գիտելիք և կարողություններ,
- ապահովել ֆինանսական շուկաների գործողությունը, գործառույթները, պատմական զարգացումները հասկանալու և կարգավորող օրենսդրությունը ըմբռնելու իմացություն,
- զարգացնել արժեթղթերը, դրանց տեսակները, գործառույթները իմանալու, դրանց շուկաների կազմակերպման, ենթակառուցվածքների գործողության և կարգավորման սկզբունքներն ու պահանջները ըմբռնելու և կիրառելու կարողություններ,
- սովորեցնել դրամավարկային քաղաքականությունը հասկանալու, մշակելու և կենսագործելու գործիքներն ու մեթոդները, ձևավորել դրանք ըմբռնելու և կիրառելու ունակություններ:

### ***Աշխատանքի հնարավորություններ***

«Ֆինանսներ» մասնագիտության շրջանավարտները կկարողանան իրենց գիտելիքներն առավել արդյունավետ կիրառել՝

- ֆինանսական ոլորտը կարգավորող բոլոր մակարդակների պետական մարմիններում՝ ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի նախարարություններում և այլն,
- տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ստորաբաժանումներում,
- ՀՀ կենտրոնական բանկում,
- Հայաստանի Ֆոնդային Բորսայում,
- Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայում,
- առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում
- ապահովագրական ընկերություններում,
- ներդրումային (ինվեստիցիոն) և կոնսաթոշակային ֆոնդերում,
- ներդրումային ընկերություններում,
- առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական ստորաբաժանումներում և այլն: